51. ՕՍԿԵՐՉՈՒ ԱՇԿԵՐՏ

Մարդու մը մեկ կէլնի, խուրբաթ կէրթա։ Կէրթա Իստանպոլ։

Կէրթա Իստանպոլ, քանի մ՝ օր կօլըրտի, կէրթա օսկերչու մը դուռ կկանի։ Կկանի սահաթվա մը չափ ու կթորկե, կէրթա։ Օսկերիչ կասե. «Հե՜յ վախ, իմա՞լ հ՝ընցուցի իմ վրեն, չհանի տաս խրոռոշ տվի էդա մարդուն, խարիբ էր, իսկի չէ, կտաներ, ուրեն կէներ խարճըլըղ»։

Հ՝ընցավ դնաց։

Լուսուն էմ լե օլըրտավ, էկավ կանավ օսկերչու դուռ։ Էլ օսկերչու սիրտ չհամբերեց, շուտըմ հանեց էրկու չարեկ, ձրկեց էդ մարդ։ Ասեց.— Առ, կէրթաս, խարճըլըղ կէնիս քզիկ։ Օր էրկու չարեկ հ՝երկնցուց, մարդն ասեց.— Էդ ի՞նչ է։

Ասեց.—Կիտամ քզիկ, տանիս էնիս քզիկ խարճըլըղ։

Մարդն ասեց.— Խուրրան էղի օր դու հ՝իսնե մեծ իս, թը չէ՝ քզիկ չափալախըմ կզարկենք, օր քու վիզ օլրեր, էրթեր հ՝ետևանց, դու ընծիկ էրկու չարեկ կէրկնցո՞ւս։

Օսկերիչն ասեց.— Ախբեր, դու հ՝ո՞րի կհերսոտիս։

Մարդն ասեց.— Կհերսոտիմ, օր դու ընծիկ աղեկութեն չէ, օր կէնիս, չարիք է կէնիս՝ էրկու չարեկ կիտաս, վաղ լե կսորվիմ, էրթամ ուրիշ դուռ կանիմ։ Թե օր աղեկութեն կէնիս, ասե՝ արի իմ մոտ վարձվի, յա ինա, ֆըլան տեխ աշխատի, քզիկ իտարա էրե։

— Տղա՜, դու կվարձվի՞ս։

— Հա, վալա։

— Օր կվարձվիս, ընծիկ լե մշակ պետք է։

Առավ զմարդն, հ'իրկուն գնաց ուր տուն։

Զմարդ վարձեց ուրեն մշակ, տարավ ուր հետ։

Էրկու, իրեկ տարի էդ մարդն է զուր մշկութեն շարունակեց։

Օրըմ լե էդ մշակ գնաց շուկեն։ Տեսավ օր դալալ կկանչե, թե՝ թագավոր մեռեր է, ֆըլան օր Տալվաթ խուշին կթորկեն, հ'ըմեն մարդ պետկ է հ'իգա խաս բաղչեն։

Եր օր կլսե, կիգա տուն։ Հ'իրկուն մշակ կիգա։ Հաց կտանե դնե աղին։ Հաց ուտելե վերջ, սեղան կվերցու։ Սեղան կվերցու, կիգա կանի աղի հ'առեջ։ Աղեն կհարցու.— Ի՞նչ կա։

Կասե.— Աղա, հ'էսօր ես գացի շուկեն։ Դալալ կրոռեր, կասեր, թե՝ հ'ըմեն մարդ ֆըլան օր հ'իգա խաս բաղչեն, Տալվաթ խուշին կթողեն, տեսնանք որ կէղնի թագավոր։ Դու լե պիտի էրթա՞ս էնտեխ։

Աղեն ասեց.— Հա, ըպա հ'ըմեն մարդ պետկ է էրթա։

— Շատ աղեկ, օր դու էրթաս, զիս լե կտանի՞ս քու հետ։

— Հա, լաո, հ'որի՞ չըմ տանի, իմ քսեն ի՞նչ կուտիս, խմիս։

Ասեց.— Աղա, էղավ օր էկավ դրեց քու գլխուն, դու կէղնի՞ս թագավոր։

Աղեն ասեց.— Հա, ըպա վիր գլխուն դնե, կէղնի թագավոր։

— Աղա,— ասեց,— օր դու էղար թագավոր, ի՞նչ պիտի էնիս աշխըրկիս մեջ։

Ասեց.—Պիտի էնիմ, օր գելն ու գառ հ'իտրաց արծեն։

Ասեց.— Աղա, էղավ օր դրեց իմ գլխուն, ես լե կէղնի՞մ թագավոր։

— Հա, ըպա հ'որի՞ պիտի չէղնիս։

Աղեն ասեց.—Տղա, լաո, էղավ, օր ղու էղար թագավոր, դու ի՞նչ կէնիս։

Տղեն ասեց.—Աղա, վալայի, ես էղնեմ թագավոր, հըմալ պիտի էնեմ օր, մեր զորդին ուրանա։

Պառկան քնան, լուսուն հ'ելան։ Լուսուն հ'ելան, դալալ կանչեց, թե հ'ըմեն տեխ, հ'ուր օր օրձ մարդ կա, թըղ հ'իգա խաս բաղչեն, հ'էսօր Տալվաթ խուշին կթորկեն։

Հ'ելան օսկերիչն ու մշակ, առան զիրար, գացին խաս բաղչեն։ Ժողովուրդ հ'ըմեն էկան ու լըցվան։ Տալվաթ խուշին թորկեցին, օլորտավ, օլորտավ, էկավ էդ տղի գլխուն գրեց։

Աֆանդրմ, բռնեցին զտղեն, թալեցին հ'առջև դըրբի։ Զարկին, հա զարկին, հա զարկին, տարան հըմալ ծակըմ մտուցին օր, ասլա ջադա չկա, մենակ մեկ ձեռքի տեխ կա, օր օրական ուրեն հացըմ իտան, ուտե, անոթից չմեռնի։ Փակեցին զդուռ, թորկեցին էկան։

Շաբաթըմ հ'ընցավ։ զՏալվաթ խուշին մեկ լե թորկեցին։ Օլորտավ, օլորտավ, զտղեն չգտավ, գնաց, ծառի մը ծերու վրեն դրեց։

Քաղքի ժողովուրդ, մեծ մարդիկ ժողվան, մաճլիս էրին, ասին. «Ջանըմ, կարելի է էն մարդու նասիպն է, հ՝որի՞ն իք տարի, խոթի ծակ, գացեք հանեք, բերեք Տալվաթ խուշին, թորկեք։ Օր գնաց, մեկ լե նըստավ էն մարդու գլխուն, էնիք մզիկ թագավոր»։

Մեկել շաբթուն գացին հանին զտղեն, առան էկան։ Ջունքի շաբաթըմ մեկ հեղ կթողեն զՏալվաթ խուշին։ Օր բերին զՏալվաթ խուշին թորկին, օլըրտավ, օլըրտավ, էկավ, տղի գլխու վրեն դրեց։

Տարան զտղեն, դրին թախթի վրեն։ Հ՝իրկուն դրեցին, լուսուն թելխըռաֆ տվեց չորս դին, սազեց վատութեն էնել։ Էն հըմալ գեշութեն էղավ օր, մարդըմ չկոներ ուր տնեն հ՝ելներ, էրթեր դրկեցի տուն։ Սարայու չորս դին խարախոլ դրեց։ Որն օր կէրթեր, զուր դարդ կիլեր, կղարկեն մզրըխի ծեր, կտանեն կորցուցնեն։ Մարդ չըն թողե, օր էրթեր, զուր ցավ հ՝իլեր։

Էղավ օր էդ մարդ հըմալ հրաման հանեց՝ վիր տուն օր մեռել կմեռնի, պետկ է զուր հ՝առիկ ծակե, հանե տանե պահե, դրոնեն իրավունք չկա մեկըմ զուր մեռել տանե, գերեզմներ պահե։

Օրըմ լե երևելի ըխտյար փաշե մը նստուկ էր ուր տան դուռ։ Տեսավ օր ուր գրկեց մեռեր է, զհ՝առիկ կծակեն։ Կանչեց զտղեն։

Ասեց.— Տղա, լաո, էդա մըր գրկեցի տուն զուր հ՝առիկ հ՝որի՞ն կծակե։

— Ըպա չասիս,— ասեց տղեն,— մըր թագավոր ամր էն հըմալ է, օր վիր տուն մեռել կմեռնի, պետք է զուր հ՝առիկ ծակե, հանե տանե պահե, դրոնով չթողե հանեն։

Ասեց տղին.—Դու կառնա՞ս էրթաս զՖըլան, Ֆըլան երևելի մարդիկ կանչիս, հ՝իգան ընծիկ։

Տղեն ասեց.— Հ՝որի՞ չէ։

Տղեն գնաց, քսան, եռսուն երևելի մարդ կանչեց, առավ էկավ։ Առավ էկավ, էդ ըխտյար մարդ վերուց ասեց.—Մարդիկ, մըր քաղքի մեջեն մարդահոտ կտրավ, խոմ դուք բոլորովին չմեռաք, հ՝ելեք գացեք էդ թագավորի մոտ, ասեք զուլում զուլում, էդա մեռել տանքով հանել, տանել պահել ի՞նչ է։

Մարդիկ ասին.— Դու խաբար չունիս, հազարավոր մարդիկ գացին, օր զուրանց դարդ ու ցավ հ՝իլեն թագավորին, խարախոլներն կանուկ ին, չթողին, բրոնին զըմեն զարկին մզրըխի ծեր, սպանին։

Էդ երևելի մարդն ասեց.— Մարդիկ, ձինե բանըմ հարցում, զողորդըն ասեք։ Էդ մարդու քյան ու մաքյան հ՝ու՞ստեն է, վի՞ր տղեն է, օր բերիք, էրիք ձզիկ թագավոր։

Ասին.—Ընլան օսկերչու մշակն է, վի՞ր տղեն է։

Ասեց.— Դը գացեք, զօսկերիչ կանչեք, թըղ հ՚իգա։

Գացին կանչին զօսկերիչ, առան էկան։ Առան էկան, էգ երևելի մարդ վերուց ասեց.— Դու զէն մ՚ ասի, էդա մարդ օր էղեր է մզիկ թագավոր, հ՚ուստե՞ն է, վի՞ր տղեն է։

Օսկերիչն ասեց.— էկավ իմ մոտ վարձվավ, տարիմը էրկու էղավ՚ մշակ։ Ճտալվաթ խուշին օր թորկին, գնաց նստավ գլխուն, էղավ թագավոր։ Ես լե ձի պես ի՞նչ գինամ, վիր տղեն է։

Երևելի մարդն ասեց.—Օսկերիչ, հալբաթ էդ մարդ տարի մը, էրկու, քու տուն հաց կէրեր է։ Մեկ լե զքու խաթըր բալքիմ բռնե։ Դու պետկ է էրթաս, տախալաթ էնիս, բալքիմ էդա բանին վերջըմ իտա, չէրթաս, քու էրթալու օրն է։

Օսկերչու ճար կտրավ, ասեց.—Հ՚ելնեմ էրթամ, էլ ի՞նչ պիտի էնեմ։

Հ՚ելավ գնաց ուր տուն։ Դեմք ավրեր էր, կնիկ տեսավ, ասեց.—Մարդ, աստված խեր էնե, զքու նըյաթն հ՚որի՞ն իս թթվեցուցի։

— Կնիկ, ալ ու քեֆյաթ հըմալ է, քաղքցիք բռներ ին ղիմ յախեն, իլայի կէլնիս կէրթաս էդա թագավորին կասես, էդա բան աղեկ բան չէ՚ կէնե, քանի օր տարի մը, էրկու քու տուն մշկութեն է էրի, բալքեմ՚ քզիկ լսե։

Կնիկն ասեց.—Մարդ, զքու նըյաթ մ՚ անի, դու լե հ՚ելի, գնա։ Թե օր քու հաց հալալ է, վալայի, բան լե չէղնի։ Թե օր հալալ չէ, հարիր մարդու մեկ մեկ մըզրախ զարկած են, թըղ մըզրախըմ լե քզիկ զարկեն, դու վինե՞ հ՚էվել իս։

Մարդն հ՚ելավ լուսուն, զուր ճոկան առավ ուր ձեռք, տըլեկի նախոշի պես գնաց։

Աֆանդըմ, գնաց. ինք տեսավ օր թագավոր հ՚ելեր է բաղներու վրեն, փարվեզ կիտա, կէրթա ու կիգա։ Հեռվանց զօսկերիչ տեսավ։

Կանչեց զուր հ՚առջևու մարդ, ըսավ.—Կէրթաք, էդա էկող մարդուն հեչ չըք թողի օտներ գետին առնե, ձըր գլխըներու վրեն կառնեք, բերեք իմ խեչ։

Գացին խարախոլներ, զօսկերիչ վերցին գլխու ուրանց վրեն, առան էկան, թագավորի հ՚առեջ գրին։ Բերին նարդիվանի գլուխ հ՚իջուցին։ Օսկերիչ դողաց, խամ ու խուտում չմանցեր էր չոքեր։

Թագավոր տեսավ օր օսկերիչ զռանկ թալեց, պոռաց.—Հայրիկ, մը վախենա, բան չկա, խիանաթ էդա խըդար վախտ է, ես հ՚ոդա իմ, չասիս՚ օրըմ էրթամ, տեսնամ հ՚իգամ։ Մը վախենա, հ՚առեջ արի։

Թագավոր տեսավ, օր օսկերիչ կվախենա, ինկ էկավ հ՚առեջ, բռնեց զձեռք ու թոխա էրեց, ասեց.— Հայրիկ, ես գինամ, զու հ՚որին իս էկիս

Դու էկեր իս, խնդրվիս, օր էդա մեռելներ տանքով չհանեն, տանեն պահեն։ Հմկա հրաման կէնեմ, օր տանքով էլ չհանեն տանեն պահին, դռնով տանեն։

Թել տվեց չորս դին, թե թագավոր հրաման կէնե, օր ամեն մարդ հ՝որես բաց զուր մեռել, ուր դռնով հանե, տանե պահե։

Թագավոր կանչեց խարախոլըմ, հարիր օսկի տվեց ձեռք, ասեց.— Կտանիս, գողտուտիկ կկանչիս զօսկերչու կնիկ կհանիս դուրս, զէդա հարիր օսկին կիտաս ուրեն, կասիս՝ թագավոր կասե՝ թը չվախենա, օսկերիչն իմ մոտն է, հոկցած տաս, տրսնուհինգ օր չըմ թողի հ՝իգա։

Խարախոլ տարավ տվեց, էկավ։

Օղորդ, օսկերիչ կխոսա թագավորի հետ, բըլե հոգին էղեր է կորեկ մը հատ։

Էղավ հ՝իրկուն, առավ զօսկերիչն, գնաց ուր սարեն, հաց կերան, պառկան։ Պառկան, բըլե օսկերիչ չհ՝իշխընա քնի։ Ուռի պես կդողա ուր տեխի մեջ։ Սահաթ էղավ իրեկ, օսկերիչն տեսավ լըխբռտունըմ հ՝ընցավ սարի մեջ, էրկինք ու էրկիր գացին ու էկան։

Հաղըմ տեսավ օր, էրկու մարդ կանան թագավորի գլխու վերև։

— Թագավոր ապրած։

Թագավոր թըռավ, հ՝ելավ կանավ օտկի։

Օսկերիչ գողտուկըմ աչից տրկով կիշքե։

Թագավոր օր հ՝ելավ օտաց կանավ, էգ էրկու մարդ ասին.—Քզիկ ո՞ր հրաման էրեց, օր ասիր՝ ամեկ մարդ զուր մեռել տանքով չհանե տանե թաղե, դրռնով թըղ հանե, տանե թաղե։

Թագավոր լալկավ մնաց, ճուհաբ չտվեց։ Օր ճուհաբ չտվեց, էդ էրկու մարդ ասին.— Լուսուն կէլնիս, հ՝առջին հեղվընե ավելի խիստ հրաման կէնիս, հրմալ օր դրկեց դրկեցի տուն չկառնա էրթա, զմեռելներ լե տանքով հանին, հ՝առջվան պես, տանեն պահեն։

Ասին ու աներևութացան։

Թագավորն էկավ զօսկերիչն հ՝իմցուց, ասեց.— Հայրիկ, դու կռայեցի՞ր ինչ էղավ։

Օսկերիչն ասեց.—Չէ։

— Հպա, չասիս, ես օր հրաման էրեր ենք հ՝որես բաց ամեն զուր մեռել ուր դռնով հանե, տանե պահե, աստված հերսոտեր էր, ճամբեր էր զուր էրկու հրեշտակ, թե՝ քզիկ ո՞ր ասեց, օր դու էդ հրմալ հրաման տվիր, լուսուն կէլնիս, հ՝առջրվնե ավելի խիստ հրաման կիտաս, ամեկ մարդ զուր մեռել ուր տանքով տանե պահե, դրկեց դրկեցի տուն չէրթա, օր էրթա, զարկին, ջարդին, սպանին։

Լուսուն հ'ելավ չորս դին թել տվեց, օր ամեկ մարդ զուր մեռել ուր «ոանքով հանե, տանե, պահե։

Էմ լե հ'առջվա թաս, հ'առջվա տարազ։

Հաց կերան, հ'ելան գացին խաս բաղչի մեջ։ Հով տեխրմ թալին զուրանց աթոռքներ, նստան օսկերիչն ու թագավոր ու խոսացին։

Թագավոր տեսավ օր էրկու կնիկ, էրեխե մը խոնդախ ուրանց գիրկ ու մարդրմ ուրանց ետև կիգա ու էրեխեն հմալ կպոռա, ճըվա, օր սաղ քաղաք կթնտա։

Թագավոր ասեց.—Ջանըմ, էդա ինչ պիտի էղնի։

Ճամբեց խարախոլըմ, ասեց.—Գացեք, առեք զէդ էրկու կնիկ, մարդն ու էրեխեն, էկեք։

Գացին, առան էկան։ Բերին զխոնդախ, դրին թագավորի հ'առեջ, կնկտիք լե էկան, ձեռք քաշվան մեկ դին, կանան։

Թագավոր զխոնդախ տվեց քակել, ձեռք դրեց էրեխի սրտին, ասեց.— Գառնուկ, հ'որի՞ դու էդ խըդար բանձրանց կխժաս։

Աստծու հրամանով էրեխեն հ'ելավ լեզու, ասեց.—Թագավոր ապրած, իրեկ տարի հ'առեջ իմ պապ գացեր էր խուրբաթ։ Իմ հողբեր տուն էր, մադնվավ իմ մամ, ինչ էրեց իմ մամ, ձեռք չտվեց ուրեն։ Օրըմ լե ցերեկ կպատվտի տան մեջ, հար գիշեր կէղնի, կիգա կմոտենա իմ մամուն, ես էն մեղքեն եմ ընծայի։ Հ'էսօր լե վերցած են զիս, կտանեն ավազան, կբոռամ ճըվամ, կասեմ ես արժանավոր չեմ էն ավազանի մեջ լողկընամ, մարդ անկաճ չէնե։ Իմ լացու պատճառն էդ է։

Մամուց հարցուց, մամ լե էդպես թարիֆ էրեց։

Ճամբեց էրկու հատ փոլիս, ասեց.—Գացեք զէդ մարդ բըռնեք, բերեք։

Գացին բռնին բերեցին, էկան թագավորի մոտ։ Ֆարմանըմ տվեց գրել, կախեց էդ մարդու վզեն, իրեկ օր տվեց էդ քաղքի չորս դին օլըրցնել։

Իրեկ օրն օր թըմավ, ամր էնեց, տարան կարմընջի գլուխ կախեցին։

Թագավոր ճամբեց զէդ էրեխեն ու զուր մամ ժամ։ Մկրտեց, բերեց տեխրմ, դրեց պահեց։

Էղավ հ'իրկուն։ Ինք ու օսկերիչն հ'ելան գացին ուրանց սարեն։ Հաց կերան, պառկան։ Սահաթ էղավ իրեկ, մեկ լե սարի քար ու փետ դողաց։

Օսկերչին էմ լե քուն չկեր։ Գողդուկ զյորզան ծըրպեր է, կիշքեր։

Մեկ լե տեսավ օր մարդրմ կանավ թագավորի գլխուն։

— Թագավոր ապրած։

Թագավոր թռավ, կանավ։

Ասեց.— Թագավոր ապրած, աստվածակույս կողմանե հրաման է, որ լուսուն հ'ելնես, թել իտաս քու էրկրի շորս դին, գելն ու դառ հ'իդրաց արծեն։

Ասեց ու համրարձվավ։

Թագավոր դարձավ օսկերչու վրեն.—Հերիկ, հերիկ,— հ'իմցուց, հալրու քի հերն հ'իմաց էր։

Հ'ելավ, նստավ օսկերիչն։ Որ հ'ելավ օսկերիչ նստավ, վերցուց զթաց դրեց օսկերչու գլուխ։ Ասեց.—Մըր պայման հըմլա է, քանի որ խազար ու խլյամաթ է, ես թագավորենք, հ'եր էղներ գելն ու գառ հ'իդրաց արծեն, դու... Հար հ'էոոր աստծու խազամբն էր էկի, ես թագավորեցի, հմկա աստծու սիրտ հ'իշավ, դառցավ ուր ստեղծածի վրեն, ամր էրեց, որ գառն ու գել հ'իդրաց արծեն, իմալ որ դու կուզեր, դը էրե թագավորութեն։

Օսկերիչն էղավ թագավոր։ Լուսուն թել տվեց քաղքներ, թե հորես բաց գելն ու գառ հ'իդրաց պիտի արծեն, ամեկ մարդ, իմալ որ ադաթն է էղի աշխարհիս գլխեն, զուր մեռել ուր դռնով հանե, տանե պահե, մարդ մարդու դակմիշ չէղնի։ Ու խաղաղութեն էղավ։

Նոր ինկ լե էղավ օսկերչուն տղան։

Էնդունկ հասան ուրանց մուրազին, դուք լե հասնեք ձըր մուրազին։